11. ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ ՈՒ ՆԱԽՐՋՈՒ ՏՂԵՆ

Կէղնին չէղնին մեկ թագավորի ու մեկ նախրջում տղա կէղնին։

Կելնին հ'իրարու հետ կհ'ընկնին ճամբախ կէրթան։

Կէրթան կը ծառվընան, ճամբու հետ ջըրհորի մի կը հանտըպին։

Թագավորի տղեն նախրջու տղին կըսե.

— Տղա՛, ես կը հ'իջում քզի ջրհորի մեջ, խմե ջուր, կը քաշիմ հանիմ, մեկել անգամ լե գու հ'իջու ընծի։

Թագավորի տղեն նախրջու տղին կիջու, կը խմե ջուր, կը քաշե հանե։ Հ'ետի անգամ նախրջու տղեն կիջու թագավորի տղին։

Թագավորի տղեն օր կը խմե ջուր կը խըլըսի, նախրրջու տղին կըսե. «Ք'աշա հանա»։

Նախրջու տղեն կըսե.— Ջըմ հանի, հ'երգվի օր յոթ տարի դու էղնիս նախրջու տղա, ես էղիմ թագավորի տղա, նոր կը հանեմ։

Ճար կտրուկ մարդ, ի՞նչ պըտի էնե, կըսե. «Թըղ էղնի»։ Նոր կը քաշե հանա։

Կհ'ընկին ճամբախ կէրթան։ Կէրթան մեկ թագավորի քաղքիմ կը մոտենան։ Կէրթան էդ թագավորի վազիրին կըսին.

— Մենք խարիպ ինք, բանվոր պետք չէ՞ ձըզի։

Վազիր կըսե.— Պետք է, դուք ի՞նչ մարդ իք։

Նախրջու տղեն օր էղեր է թագավորի տղա, կըսե. «Ես թագավորի տղա իմ», թագավորի տղեն լե կըսե. «Ես նախրջու տղա իմ»։

Նախրջու տղին կէնե լալա, օղորթմա թագավորի տղին լե սայիս։ Ջիանք կիտա հ'առեջ կը տանե արծրցու։

Իմալ կէղնի, օր մի էդ սեյիս ձիանք կը տանի օր արծրցու, թայավորի ախճիկ կը տեսնի, աչք կը հ՚ընկնի հ՚ինք։

Չէ, լալի սիրտ լե կէղնի թագավորի ախճկան. կը տեսնի օր թագավորի ախճիկ աչք ձգեր է ուր հ՚ընկերոջ, կէրթա թագավորին սատանութեն կէնե, թե.

— Թագավոր ապրած, քու ախճիկ աչք թալեր է քու սայիսին, հ՚իրարու հետն ին։

Թագավոր էդ օր կը լսե, կըսե.

— Օր հըմալ է, ինա ճամբցու ուրին, թըղ էրթա սար իլղու հ՚առեջ, թաքիլան իմ աչքի հ՚առջևեն թըղ հեռենա։

Կէրթա կը ճամբե, կէրթա սար իլղու հ՚առեջ։

Թագավորի ախճիկ կը տեսնի օր էդ հըմալ չէղավ, տղեն ուր աչից հ՚առջևեն լը հեռեցուցին, ճամբին սար իլղու հ՚առեջ։

Կըսե.— Ջա՚նըմ, էդի իմ աչից հ՚առջևեն լե հեռեցուցին, ամիս մի կէնե օր չըմ տեսի, իմա՞լ կէղնի իմ հալ, ի՞նչ ճամբախ գտնիմ, ճամբիմ բերիմ էդ տղին։

Օր մի կելնի կէրթա թագավորի մոտ, կըսե.

— Աբո՛, էդա մեր ձիանք աղեկ չըն պահի մեր սայիսներ, ուրըմ րի պատիվ էրե, փոր մի հաց կերցու, բալքիմի աղեկ աչքին ձիաններուն։

Թագավոր լե ուր ախճկան պես կարճամիտ կէղնի, կելնի կի-տա տավաթ կառնի, սայիսներ գիգա, բայց թագավորի տղեն օր էլեր է նախրջու տգա ու սայիսի, հետ ուրանց չեն բերի, կը թողին ձիաննու հ՚առեջ։

Էնդոնք օր գիգան, տղեն կհ՚ընկնի մարախի մեջ, գլուխ կը թալե ու պալի մի տակ կը պառկի քնի։

Օր կը քնի, հալիվոր մի գիգա կհ՚իմցու, կըսե.

— Տղա, լաո՛, հ՚որին ի՞ս մինակ մանցի էդա սարի գլուխ, քելե էրթանք մըր տուն։ Հ՚որի՞ն հ՚ըմեն հեղ չըս հ՚իգա մըր տուն՝ խոսանք։

Տղեն կըսե.— Պա՚պե, ես ի՚նչ դինամ քու տուն հ՚ու՚ր է օր հիդամ քու տուն։

Գելնի կառնի գիգա։ Կբերե էրկու օչխրի ջանդակ, էրկու տիկ դինի ու էն խտար լե հաց, կը ղնե տղի հ՚առեջ, կըսե.— Կե՚ր, օր չկերար, քըղի կըսպանեմ։

Տղեն է, թագավորի տղա է, բրդուճ մի էրկու կէրավ քաշվավ. պապեի պառավ էկավ ճըլոթըմ ղարկեց տղին, խելք գնաց, հ՚ընկավ գետին։

Խելք հ՚եբոր էկավ գլուխ, տեսավ ինք անոթցեր է, քաշեց էրկու ջանդակ ու էրկու տիկ գինին հ՚առեջ, կերավ օսկոր լե չթողեց, հ՚ելավ թողեց էկավ։

Ախճիկն է, օր տեսավ տղեն չէկեր է սայիսներու հետ, կսկծաց ու մնաց ուր հալի հետ։ Քենիմ օր հ՚ընցավ վրեն, էկավ պապու մոտ։

Ըսեց.— Արո՛, մըր սայիսներ մեկ լե աղեկ չաչքե մըր ձիաներուն։ Ըսկի չէ, կանչե մեկ-մեկ ձեռք չոր էնե ուրանց, բալքիմ մեր ձիաներուն աղեկ աչքին։

Թագավոր էմլե ջուհապ կէնե սայիսներուն գիգան, էդ տղին կը թողին ձիանու հ՚առեջ։

Տղեն կհ՚ընկի մտածման մեջ, կը պառկի, պալի տակ կը քնի, հալիվոր գիգա։

Կըսե.— Տղա, հ՚որի՞ն իս քնի, հ՚ելի էրթանք մըր տուն։ Կառնի տղին ուր հետ գիգա իտհաղսուն կբերե չորս ջանդակ օչխար, չորս տիկ գինի, էնոր չափ լե հաց կը դնե հ՚առեջ, կըսե՝ «Կի՛»։

Տղեն չորս օչխրի ջանդակ կուտե, չորս տիկ գինին կը խմե. կելնի գիգա։

Ախճիկ կը տեսնի օր տղեն մեկ լե հետ ուրանց չըն բերած։

Կէրթա պապուն կըսե.— Արո՛, վաղ հ՚ուղե մըր ձիանք բի տեսնաք շատ խըլավցե՞ր ին։

Օլոր օր թագավոր էդ անգամ ձիանք գուզե, սայիսներուն կըսը.— Բերեք տեսնիմ շատ խըլավցե՞ր ին։

Սայիսներ ի՛նչ շան օրթի կէդնին, կելնին ի՞նչ խըդար խըլավ ձի կէղնի, կը բերին, զայիֆ ձիանք կը թողին էդ տղի մոտ։

Հալիվոր մեկ էլ գիգա, կառնի տղին կտանի. թե օր ուրիշ անգամ էրկու ջանդակ կբերեր դներ տղի հ՚առեջ, ըս անգամ չորսհինգ ջանդակ հ՚եվել կբերե, կը դնե հ՚առեջ, կուտե, կը խմե, կելնի օր դա, հալիվոր կըսե.

— Տղա՛, առ էդա հրեղեն ձիու մաղ քու հետ. ինչ տեխ օր նեղութենի մեջ հ՚ընկար, կիտաս կրակ, գիգա քզիկ կը հասնի։

Տղեն գելնի գիգա, զայիֆ ձիանք կիտա հ՚առեջ ու կէրթա դեմ քաղաք, ո՛ր ձիու վրեն կելնի կը խեծի, ձին կը նստի, էլ չելնի կանի, չարեն կը կտրի, հրեղեն ձիու մաղ կիտա կրակ, հրեղեն ձին գիգա, կը հեծնի ու զայիֆ ձիանք կը կապե հ՚իբար, կիտա հ՚առեջ կը քշե, կը մնան ճամփախ, կը սատկին, կեցգե ուլար ուրանց ուր թև ու կըքաշե կառնե գիգա։

Թագավոր է՛դ օր կը տեսնի, կըսե.

— Սայի՛ս, էդ ի՛նչ ի՞ս էրի։

Կըսե.— Թագավոր ապրած, ես ի՞նչ էնիմ, սատկեր են. ըսի Լրթամ թագավորին ըսիմ քու ձիանք սատկեր են, պըտի չհավատա, բարին էդ է, տանիմ ջանդրկներ ցուցում. առա էկա օր քզիկ ցուցում։

Նախրջու տղեն, օր թագավորի տղա էր էղի ու էկեր էր էդ թագավորին էգի լալա, կը տեսնա օր ուր հ՝ընկեր էմլե փրթավ էկավ։

Կէրթա թագավորին կըսե.— Ես քզիկ ըսի էդա տղին մը՛ հավատար, սուտ կըսե, ձիանք ինք է փիցուցի, օր հ՝իգա էդա տեխ, քու ախճկա հետ նստի ու կանի։

Լալեն օր էդպես կըսե, թագավոր կբռնե էդ տղեն կը թալե բռնատուն։

Վախտ մը կը մնա բռնուկ, ախճիկ կիմանա, ուր հ՝օդի տակեն նըղմ կը բանա, կէրթա տղի մոտ ու գիգա։

Յոթ գլխեն դև, էդ ախճկա սալըխ կէնե, գիգա օր տանե ուրին, ախճիկ նըղմի միջով գիգա։

Կըսե.— Տղա՛, էդա հըմլա բան մի կա. յոթ գլխեն դև էկեր է օր զիս տանի։

Տղեն ձեն չհանե, ախճիկ կը թողե գիգա, դև կառնե ախճիկ կէրթա։

Դև օր կառնե ախճիկ կէրթա, տղեն հրեղեն ձիու մազ կուտա կրակ, հրեղեն ձին դիգա, կը հեծի կհ՝ընկնի հ՝ետև։ Օր կը հեծի կհ՝ընկնի հ՝ետև, ձին կըսե.

— Տղա, հ՝ու՞ր կըտանիս ընծի։

Տղեն կըսե.— Կէրթանք օր յոթ գլխեն դևից ախճիկ առնինք բերինք։

— Օր հըմալ է,— ձին ըսեց,— խամչիմի կը զարկիս ընծի, օր իմ կաշին կտրի, հ՝իշնի իմ միս, օր ախճիկ առնիմ։

Տղեն խամչիմ զարկեց ձիուն, ձին հավալամիշ էղավ, թուր մի թալեց, յոթ գլխեն դևի գլուխ կտրեց, առավ ախճիկ ու եկավ։

Օր առավ ախճիկն էկավ, տեսավ ուր հ՝ընկեր, օր լալա էղեր է ու էդ ախճիկ առեր է էնդիեն գիգա, ըսեց.

— Ախճի, քու մարդ էնդիեն գիգա, էկիր է քու հ՝ետև, գնա հասի քու մարդուն, գնա՛։

Ախճիկ գնաց հասավ ուր էրկան, գնաց։

Տղեն էլ թողեց էկավ մտավ բռնատուն։

Լալեն առավ ախճիկ գնաց, թագավորին ըսեց.

— Թագավոր ապրա՛ծ, ես էգա հրմլա քաջ մարգմ իմ, որ գացի հասա դևին, գևն սղանի, առա իմ նշանածն էկա։

Ախճիկ լե ուր մաքի մեջ կըսե. «Հողեր էղնի քու գլխուն, իմ լերողն ո՞րն է, էկեր է սուտ լաֆ կը թալե, ես ի՞նչ սև կապիմ, չըմ գինա, օղորդն ըսիմ՝ չէղնի, չըսիմ՝ չէղնի»։

Իտհաղսուն դևի օրԲանճա ախրերն հ՝ելավ էկավ, էդ ախճկան, լկավ, ըսեց.

— Թագավորն ապրած, յան քու ախճիկ կիտաս տանիմ ընծի, յան քու թախթ ու թաճ կը քակիմ։

Ախճիկ մեկ լե նըղմի միջով հ՝ելավ գնաց տղին ըսեց.

— Տղա՛, ի՞նչ կէնիս, յոթ գլխեն դևի միջնեկ ախրեր էկեր է ղիս կը տանի։

Տղեն չխոսաց, ախչիկ լաց, դառցավ էկավ ուր հ՝օտեն, յոթ գլխեն դևի ախրեր առավ դնաց։

Օր առավ դնաց, տղեն մաղ տվեց կրակ, հրեղեն ձին էկավ, հեծավ ու հ՝ընկավ ախճկա հ՝ետևեն։

Օր հեծավ հ՝ընկավ ախճկա հ՝ետևեն, ձին ըսեց.

— Տղա՛, հ՝ու՞ր կէրթաս։

Ըսեց.— Յոթ գլխեն դևի ախրեր էկեր է թագավորի ախճիկ տարեր է, կէրթամ հ՝ետևեն՝ բերիմ։

Ըսեց.— Տղա՛, ընծի հրմալ կը խամչիս, որ իմ միս կտրի հ՝ընկնի օսկորներ, հավալամիշ էղնիմ, թը չէ, դև կը խըլըսի կէրթա։

Խամչին տվեց, միս կտրավ հ՝ընկավ օսկորներ, ձին հավալամիշ էղավ. տղեն հասավ թուր մի թալեց՝ դևի ախբոր գլուխ կտրավ հ՝ընկավ դետին։ Առավ թագավորի ախճիկն ու էկավ։

Օր էկավ, տեսավ ուր հ՝ընկեր նախրջու տղեն. որ էղեր է լալա, էն դիեն դիգա, հ՝ընկեր է էդ ախճկա հ՝ետևեն։

Ըսեց.— Ախճի, գնա՛ հասի քու նշանլուին, գնա՛։

Ախճիկ գնաց, հասավ լալին գնաց, տղեն լե էկավ ըրոնատուն։

Լալեն ըսեց.— Թագավոր ապրած, տեսնա՞ս, ես իմալ մարգմ՝ եմ որ յոթ գլխեն դևի ախբեր սպանի, քու ախճիկն առա էկա։

Ախճիկն մարախեն փաթլանմիշ կէղներ, ձեն չհաներ։

Էդ հաղ դևի մեծ ախբերն հ՝ելավ էկավ, ըսեց.

— Յան քու ախճիկ կետաս տանիմ ընծի, յան քու թախթ ալթուսթ կէնիմ։

Ախճիկ մեկ լե հ՝ելավ նըղմի միջով էկավ տղի մոտ։

Ըսեց.— Էդ հաղ յոթ գլխեն դևի մեծ ախբերն է էկի ընծի կը տանե։

Տղեն ձեն չհանեց, ախճիկ լաց, դառցավ էկավ հ'ետև, յոթ գըլխեն դևի մեծ ախբերն առավ ու դնաց։

Օր առավ դնաց, տղեն մազ տվեց կրակ, հրեղեն ձին էկավ կանալ հ'առեջ, հեծավ ու հ'ընկավ դևի ախբոր հ'ետևեն։

Օր հեծավ հ'ընկավ դևի ախբոր հ'ետևեն, ձին ըսեց.

— Տղա, հ'ո՞ւր կէրթաս։

Ըսեց.— Յոթ ղլխեն դևի մեծ ախբեր էկեր է թագավորի ախճիկ տարեր է, կէրթամ բերեմ։

Ձին ըսեց.— Հըմալ խամչիմ կը զարկիս ընծի, օր իրեք չորս օսկոր կոտրի իմ խաբուրղքներաց։

Տղեն խամչիմ կը ղարկե, ձիու խաբուրղի օսկրոներ կը լըցվի փորու մեջ, ձին հավալամիշ կէղնի. թուր կը թալե յոթ գլխեն դևի մեծ ախբոր գլուխ կը կտրե, կառնի ախճիկ գիգա։

Գիդա կը տեսնի օր թագավոր էնդիեն գիգա խոշունով, մախսուս կը թալե թուր ձեռք կը կտրե, կը բերե ախճիկ կիտա թագավորին, թագավոր էտոր ձեռք կը տեսնի, կը հանե ուր յոթ տարվան խարաճի դաստմալ, կիտա էդ տղին՝ կը կապե ձեռք։

Տղեն գիդա կէրթա ուր բրոնատուն, ախճիկ լե ուր տեխ։

Օրըմ ախճիկ կը տեսնի օր, ուր հոր յոթ տարվա խարաճի դաստրմալ կապուկ է էդ տղի ձեռք։

Կէրթա հոր կըսե.— Աբո՛, քու յոթ տարվա խարաճի դաստմալ կատուկ է մըր բրոնավորի ձեռք։

Թագավոր կը ճամբե, էդ բռնավոր կառնե գիգա։ Կիչքե, կը մտածե, կըսե. «Վոլլահի էդա տղեն էն տղեն է, օր յոթ գլխեն դևի մեծ ախրեր սպանեց, առավ զիմ ախճիկ ու էկավ»։

Տղին կըսե.— Տղա, հ'ուղե՝ տամ։

Տղեն կըսե.— Կանչե՛ք ձըր լալին դա, օր հ'ուզիմ։

Կը կանչին լալին գիզա։

Չէ՞ ուրանց յոթ տարին լըմընցեր էր, օր հ'ինք էղեր էր նախըրչու տղեն ու նախրչու տղեն՝ թագավորի տղա։

Կըսե.— Լալա, մըր պայման չըլըմընցա՞վ, օր ֆլան ջրհորու վրեն էրինք։

Լալեն կըսե.— Լըմընցեր է։

Նոր էդ տեխ ուր գլխու դալած կը պատմե թագավորին ու էդ տեխ էղնողներուն։

Կըսե թե.— Ես ֆըլան թագավորի տղեն իմ, էդալե իմ քաղքի նախրչու տղեն է. էկանք ֆըլան ջրհորի վրեն փոխեցինք մեր ա-

նումներ. ես էղա նախրչու տղա, նախրչու տղեն էղավ թագավորի տղա։

Թագավոր էդ օր կը լսե, կը բերե լալեն կը կախե, օր զինք խաբեր է, ըսեր է թագավորի տղա իմ։

Ու ախճիկ լե կիդա էդ տղին։ Յոթ օր դհոլ ու զուռնեն կը զարկե, քեֆ ուրախութեն կէնին ուրանց, ու կդնե ուր տեխ թագավոր։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձեր մուրազին։